Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

# Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության միջազգայնացման ռազմավարության գործողությունների պլան

| | | Խնդիր | Գործողություն | Պատասխանատու մարմին | Ժամկետ |
|---|---|---|---|---|---|
| **ՆՊԱՏԱԿ 1. Ձևավորել բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացումը խթանող միջավայր** | | | | | |
| *Նպատակ 1* | *1.1* | Բարելավել բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացման իրավական հենքը | 1.1.1. Մշակել բարձրագույն կրթության ոլորտում միջազգայնացումը խթանող իրավական կարգավորման միասնական փաթեթ՝ հաշվի առնելով ստանձնած միջազգային պարտավորությունները: Մասնավորապես՝ ճշգրտել, վերհանել իրավական դաշտի այն խոչընդոտները, որոնք խանգարում են միջազգայնացմանը և ներկայացնել համապատասխան գերատեսչություններին: | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | 2021 |
| | | | 1.1.2. Ստեղծել բարձրագույն կրթության միջազգայնացման միջգերատեսչական հանձնախումբ՝ առկա խոչընդոտների վերացման և աշխատանքների արդյունավետ կոորդինացման համար: | ԿԳՄՍ նախարարություն | 2021 |
| | | | 1.1.3. Մշակել ռազմավարական նպատակների իրագործման մշտադիտարկման, գնահատման ընթացակարգեր և ցուցիչներ: | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | 2021 |
| | | | 1.1.4. Գնահատել կարճ շրջափուլով կրթական ծրագրերի ներդրման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը: | ԿԳՄՍ նախարարություն | 2021 |
| | *1.2* | | 1.2.1. Ձևավորել տարածաշրջանային կրթական-հետազոտական հարթակ (կենտրոն): | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | 2022-2023 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ներգրավել/ապահովել հանրային և այլ ռեսուրսներ՝ միջազգայնացումը խթանող միջավայր ստեղծելու համար | 1.2.2. Մշակել ՀՀ բուհերի միջազգային ճանաչում և բարձր վարկանիշավորում ունեցող արտասահմանյան բուհերի հետ համագործակցելու փոխշահավետ մեխանիզմներ: | Բուհեր | 2021 |
| | | | 1.2.3. Մշակել օտարերկրյա մասնագետներին գիտակրթական գործընթացներում ներգրավման մեխանիզմներ և այդ ներգրավվածությունը գնահատելու և խրախուսելու գործիքակազմ: | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | 2022-2023 |
| | | | 1.2.4. Միջազգային գիտակրթական ծրագրերում ներգրավել բուհերի հիմնական գործատու կազմակերպություններին և հանրային կառույցներին: | Բուհեր | 2022-2023 |
| | ***1.3*** | Ընդլայնել բուհերում օտարերկրյա (այդ թվում սփյուռքահայ) ուսանողների ուսումնառելու հնարավորությունները | 1.3.1. Ներդնել բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի օտար լեզուների իմացությունը խրախուսող համակարգ: | Բուհեր | 2021 |
| | | | 1.3.2. Պրոֆեսորադասախոսական կազմի համար կազմակերպել մասնագիտական անգլերենով վերապատրաստումներ: | Բուհեր | 2021-2022 |
| | | | 1.3.3. Ավելացնել օտար լեզվով դասավանդվող կրթական ծրագրերի և մոդուլների քանակը: | Բուհեր | 2021-2023 |
| | | | 1.3.4. Դիտարկել բուհերում կրթության տրամադրման այլ ձևեր: Հնարավորության դեպքում իրականացնել առցանց կամ համակցված ուսուցում: | Բուհեր | 2021-2022 |
| | | | 1.3.5. Վերապատրաստել դասախոսական անձնակազմին առցանց ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ հմտություններով: | Բուհեր | 2021 |
| | | | 1.3.6. Բարձրացնել արտասահմանյան ուսանողներին տրամադրվող ծառայությունների որակը՝ անձնակազմի վերապատրաստումներ իրականացնելու միջոցով: | Բուհեր | 2021-2023 |
| | | | 1.3.7. Առաջարկել օտարերկրյա ուսանողներին հայոց լեզվի ուսուցման լրացուցիչ դասընթացներ: | Բուհեր | 2023 |
| | | | 1.3.8. Աջակցել օտարերկրյա ուսանողների կացության ապահովմանը: | Բուհեր | 2023 |
| | ***1.4*** | Բարելավել բուհերի ակադեմիական և | 1.4.1. Հատուկ ընդգծել միջազգայնացման գերակայությունը ինչպես բուհական ռազմավարական զարգացման, այնպես էլ ակադեմիական և վարչական ստորաբաժանումների աշխատանքային պլաններում: | Բուհեր | 2021 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | վարչական աշխատակազմի ներգրավվածությունը միջազգայնացման գործընթացներում | 1.4.2. Բուհերի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմին ներգրավել միջազգայնացման ռազմավարության իրագործմանը և համապատասխան գործընթացների իրականացմանը: | Բուհեր | 2021-2025 |
| | | | 1.4.3. Ուսանողների համար կազմակերպել միջմշակութային և սոցիալական շփումները խթանող միջոցառումներ: | Բուհեր | պարբերաբար |
| **ՆՊԱՏԱԿ 2.Խթանել բարձրագույն կրթական ծրագրերի և հետազոտության մրցունակությունը միջազգային մակարդակում** | | | | | |
| *Նպատակ 2* | *2.1* | Ապահովել բարձրագույն կրթության և հետազոտության որակը | 2.1.1. Արդիականացնել կրթական հետազոտական ծրագրերը՝ հաշվի առնելով ազգային և միջազգային զարգացման միտումները: | Բուհեր, ՈԱԱԿ | 2022 |
| | | | 2.1.2. Ավելացնել բուհերում իրականացվող համատեղ կրթական ծրագրերը: | Բուհեր | 2025 |
| | | | 2.1.3. Մշակել և ներդնել ուսուցման ժամանակակից մեթոդներ՝ հատուկ կարևորություն տալով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներին: | Բուհեր | 2022 |
| | | | 2.1.4. Ավելացնել կիրառական նշանակություն ունեցող հետազոտությունները: | Բուհեր | 2022 |
| | | | 2.1.5. Մշակել միջազգային գրախոսվող ամսագրերում հրապարակումների աճին նպաստող ֆինանսական խրախուսման համակարգ: | Բուհեր | 2023 |
| | *2.2* | Ուղղորդել բուհերի միջազգայնացումը երկրի զարգացման համար գերակա նշանակություն ունեցող ոլորտներ | 2.2.1. Որոշել ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջանները և երկրները (առնվազն երեքը), և ծավալել գիտակրթական համագործակցության համակարգված գործունեություն: | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | 2022 |
| | | | 2.2.2. Ապահովել պետական համաֆինանսավորում Հայաստանում միջազգային համագործակցության առաջնային նշանակություն ունեցող ծրագրերի համար: | ԿԳՄՍ նախարարություն | 2023 |
| | | | 2.2.3. Ավելացնել մասնակցությունը դրամաշնորհային ծրագրերին՝ կարևորելով կրթական և հետազոտական գործընթացներում երկրի զարգացման համար գերակա ոլորտների ներգրավվածությունը: | Բուհեր | մշտապես |
| **ՆՊԱՏԱԿ 3. Բարձրացնել Հայաստանի բարձրագույն կրթության և հետազոտության միջազգային տեսանելիությունը և գրավչությունը** | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Նպատակ 3 | 3.1 | Ներգրավել այլ երկրներում ապրող շրջանավարտների, օտարերկրյա բուհերն ավարտած հայազգի շրջանավարտների, օտարերկրյա դասախոսների և սփյուռքի ներկայացուցիչների (կրթության դեսպանների) բարձրագույն կրթության և հետազոտության միջազգայնացման գործընթացում | 3.1.1. Ներդնել շրջանավարտների հետ կապի պահպանման գործառույթներ, ուսումնասիրել այդ ուղղությամբ արևմտյան բուհերի մշակույթը: | Բուհեր | 2021 |
| | | | 3.1.2. Կազմակերպել ՀՀ բուհերի շրջանավարտների հարցերով զբաղվող բաժինների միջև պարբերական հանդիպումներ և փորձի փոխանակում: | Բուհեր | 2021-2023 |
| | | | 3.1.3. ՀՀ-ում ուսումնառելու կամ հետազոտություն իրականացնելու հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը տարածելու գործում ներգրավել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները և այլ կազմակերպություններ (կենտրոններ): | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | 2021 |
| | | | 3.1.4. Կազմակերպել արտասահմանյան ուսանողների հավաքագրման տոնավաճառներ: | Բուհեր | 2021-2025 |
| | | | 3.1.5. Ստեղծել շրջանավարտների և սփյուռքահայերի ցանցային համակարգ և պատրաստել նրանց՝ որպես խորհրդատուների/դեսպանների՝ Հայաստանում բարձրագույն կրթություն ստանալու և հետազոտություն իրականացնելու հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվություն տարածելու համար: | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | 2022 |
| | | | 3.1.6. Խրախուսել բուհերի կառավարման խորհուրդներում, մասնագիտական հաջողություններ գրանցած օտարազգի և սփյուռքահայ մասնագետների ներգրավվածությունը: | ԿԳՄՍ նախարարություն | 2021 |
| | 3.2 | Ներդնել բարձրագույն կրթության և հետազոտության միջազգային խթանման մարքեթինգային հայեցակարգ | 3.2.1. Մշակել և ներդնել մարքեթինգային համապարփակ ռազմավարություն թե՛ ազգային, և թե՛ ինստիտուցիոնալ մակարդակներում՝ ներգրավելով մարքեթինգի մասնագետների: | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | 2021 |
| | | | 3.2.2. Բազմազանեցնել մարքեթինգային նյութերն ու միջոցները: | Բուհեր | 2021 |
| | | | 3.2.3. Թարմացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարության, բուհերի, Որակավորումների փոխճանաչման կենտրոնի և Որակի ապահովման ազգային կենտրոնի կայքերը: | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր, Որակավորումների փոխճանաչման և Որակի ապահովման կենտրոններ | մշտապես |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | 3.2.4. Ավելացնել բուհերի մասնակցությունը միջազգային կրթական ցուցահանդեսներին: | Բուհեր | 2021-2025 |
| | *3.3* | Ապահովել միջազգային վարկանիշավորման համակարգերում բուհերի ընդգրկումը | 3.3.1. Մշակել միջազգային վարկանիշավորման համակարգերում հայաստանյան բուհերի դիրքերի բարելավման գործողությունների ծրագիր: | Բուհեր | 2022 |
| | | | 3.3.2. Պետության կողմից իրականացնել բուհական համակարգի իրավիճակի վերլուծություն՝ դրանց միջազգային վարկանիշավորման համակարգերում ընդգրկվելու նպատակով: | ԿԳՄՍ նախարարություն | 2025 |
| | | | 3.3.3 Ձևավորել բարձրագույն կրթության ազգային բրենդ՝ դրսևորելով նորարարական մոտեցում: | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | 2025 |
| **ՆՊԱՏԱԿ 4. Ընդլայնել ուսանողների, դասախոսական և վարչական աշխատակազմի միջազգային շարժունությունը** | | | | | |
| *Նպատակ 4* | *4.1* | Ավելացնել դասախոսական և վարչական աշխատակազմի փորձի փոխանակման և մասնագիտական զարգացման հնարավորությունները, | 4.1.1. Խթանել պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական անձնակազմի վերապատրաստումների, միջազգային փոխանակման ծրագրերում ընդգրկվածության աճը: | Բուհեր | 2021 |
| | | | 4.1.2. Ավելացնել միջբուհական համագործակցային ծրագրերի քանակը: Բազմազանեցնել շարժունության հնարավորությունները և միջոցները: | Բուհեր | 2022 |
| | | | 4.1.3. Ազգային մակարդակով սահմանել անձնակազմի և ուսանողների արտագնա և ներգնա շարժունության թիրախային սահմանաչափեր: Առանձնացնել և թիրախավորել ռազմավարական հետաքրքրություն ներկայացնող երկրները: | ԿԳՄՍ նախարարություն | 2022 |
| | | | 4.1.4. Նպաստել միջազգային փոխանակման ծրագրերում ուսանողների մասնակցությանը՝ նվազագույնի հասցնելով արտաքին շարժունությունը սահմանափակող արգելքները: | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | 2021-2022 |
| | | | 4.1.5. Ապահովել լայն տեղեկատվություն՝ շարժունության հնարավորությունների վերաբերյալ: | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | մշտապես |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ընդլայնել ուսանողների շարժունությունը կարճաժամկետ և երկարաժամկետ կրթական ծրագրերով | 4.1.6. | Մշակել ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի միջազգային շարժունության ազդեցության գնահատման ցուցիչներ, իրականացնել մշտադիտարկում և ձեռնարկել բարելավման միջոցառումներ: Հրապարակել մշտադիտարկման արդյունքները: | Բուհեր | 2021, շարունա-կաբար |
| | | | 4.1.7. | Ուժեղացնել երկխոսությունը Հայաստանի պետական կառույցների և օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների, ինչպես նաև տարբեր գերատեսչությունների միջև՝ մուտքի և ելքի արտոնագրերի, աշխատանքային իրավունքի և ժամանակավոր կացության թույլտվությունների հետ կապված խոչընդոտները վերացնելու համար: | ԿԳՄՍ նախարարություն | 2021 |
| | | | 4.1.8. | Որոշել օտարերկրյա ուսանողների ներգրավման թիրախային երկրները՝ հիմնվելով բուհերի առանձնահատկությունների վրա, և ծավալել համակարգված գործունեություն: | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | 2022 |
| | | | 4.1.9. | Ձևավորել օտարերկրյա ուսանողների ընդունելության հստակ պայմաններ և ապահովել տեղեկատվության մատչելիությունը: | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | 2022 |
| | | | 4.1.10. | Կրթական ծրագրերում նախատեսել շարժունության «պատուհան»: | Բուհեր | 2023 |
| | | | 4.1.11. | Բուհերում ստեղծել շարժունության տեղեկատվական բազա: | Բուհեր | 2022 |
| | | | 4.1.12. | Մշակել ուսանողների, դասախոսական և վարչական անձնակազմի միջազգային շարժունության ֆինանսավորման մեխանիզմներ: | ԿԳՄՍ նախարարություն, Բուհեր | 2023 |
| | ***4.2*** | Ներդնել օտարերկրյա որակավորումների, գիտական կոչումների, կրեդիտների ճանաչման համակարգ | 4.2.1. | Մշակել որակավորումների և կրեդիտների ինստիտուցիոնալ ճանաչման թափանցիկ ընթացակարգեր: | Բուհեր, Որակավորումների ճանաչման ազգային կենտրոն, | 2022 |
| | | | 4.2.2. | Կազմակերպել վերապատրաստումներ որակավորումների, գիտական աստիճանների, կրեդիտների ճանաչման գործընթացների վերաբերյալ: | Բուհեր, Որակավորումների ճանաչման ազգային կենտրոն | Պարբերա բար |
| | | | 4.2.3. | Իրականացնել որակավորումների, գիտական աստիճանների, կրեդիտների ճանաչման ընթացակարգերի իրազեկման աշխատանքներ: | Որակավորումների ճանաչման ազգային կենտրոն | 2022 |